

ՄՈՌԱՑՈՒԱԾ ՄԻ ՀԱՅ ԵՐԳԻՉ^{*)}

Ֆրիկի ապրած ժամանակն ու դարը որոշելու նկատմամբ մեր բանասէրների կարծիքները յանգում էին այն կէտին, որ 1) ոմանք համարում էին նորան փ. դարու սկզբում վախճանուած (Վ 1330), ենթադրելով որ Ֆրիկը և կեչառեցին նոյն անձն են (լատ հ. Պոտուրեանի)։—2) Հ. Ալիշան ենթադրում էր ոչ ուշ քան փ. դարն ապրած։—3) Կ. Պօլսոյ «Երկրագունդը» ենթադրում է «թերևս փ. դարու» գործիչ։

Տեսնենք այժմ թէ Ֆրիկի՝ իւր իսկ տաղերից արդե՞ք որ և է ցուցում, ակնարկ չենք ունենայ, որով որոշել կարելի լինէր իւր ապրած ժամանակաշրջանը։ Բարեբաղդարար իւր տաղերի մէջ այս ու այն տեղը ցրուած հատուկտոր տեղեկութիւններից զատ, մեզ համար այդ տեսակէտից մեծ արժէք ունի և նորա տաղերից մէկը, որ կրում է «Վասն Արղուն Դանին և Բուղային» վերնագիրը։

Այդ տաղը մինչև այժմ մեզ յայտնի բաղձաթիւ Ֆրիկեան տաղարան ձեռագիրներից միմիայն մէկի մէջ է պահպանուած մի բարեբաղդ դիպուածով, որի կորուստն ևս շատ զգալի պիտի լինէր՝ ժամանակի հարցի լուծման նկատմամբ։ Այդ ձեռագիրը գտնուած է Օքսֆորդի Համալսարանի գրատան մէջ և յայտնի է Ms. Arm. F. 16 համարով, և որի 155^v — 169^v էջերը բովանդակում են այդ տաղը։

Աչքի առաջ ունենալով, որ տաղն անյայտ է հայ բանասիրութեան մէջ և որ բազմիցս առիթ պիտի ունենանք նորանից զանազան կոչումներ անելու, ուստի աւելորդ չենք համարում զնկ այստեղ ամբողջապէս այդ տաղը։

ՎԱՍՆ ԱՐԴՈՒՆ ԴԱՆԻՆ ԵՒ ԲՈՒԴԱՅԻՆ.

Փառք Աստուծոյ միշտ կենդանայն,
Արդար Շիրաւ դատաւորին,
Տեսէք, թէ ինչ դարմանք եղև
Հետ Բուղային և Արուխին։

^{*)} Տես «Արարատ» Երևան-Մարտ, էջ 64—88։

Բուզան, դու ճնց կամիր նենգել
 Աստուածագիր թագաւորին,
 Զոր քրիստոնեայքն ամէն հաւսար
 Ի յԱստուծոյ կու ննդրէին:

Արդուն դանքն Աստուած եղիր,
 Ո՛վ է յաղթող Արդուն դանին.
 Արդունքն ինչ վրնաս գործեց,
 Գիտեմ որդին էր Աբաղին:

Այն որ ըզբեց ի վեր քաշեց
 Եւ քեզ երևա դամէն բարին,
 Այնոր փոխրէն զինչ խորհեցար
 Կամ ո՛վ լրաէր հանցեց բանին:

Ո՛վ անմեղաց հոր կու փորէ
 Ինքն անկանի ի մէջ գրբին.
 Սուլթան—ադան թող խմացաւ
 Ապա քո գործքն զքեզ սպանեցին:

Ասցա չի կայր խակի գունան,
 Զինչ քո թերաց կոտորեցին.
 Դու քան զԱբդուլուն չիր պահաւ,
 Ի քո յանէդ խիստ կու վախին:

Բուզա էիր՝ շինքսան եղար,
 Բէկլար—բէկի իր հեծեցին,
 Զգիտեմ թէ զինչ կամիր լինել,
 Դու չիր որդի Զանկրդ դանին:

Զինչ ի վերուստ քեզ չէր արւած,
 Դու երբ կարիր հասնել բանին,
 Զոհայրն խիստ ի վեր քարշէ,
 Յետև դարնէ խիստ ի գեափն:

Մըաիկ գրբէք, աշխարհ ամէն,
 Ըսքանչեկեացն երկնաւորին,
 Տեսէք, թէ ինչ արար Աստուած,
 Ի հասուցութիւն ճրգորին:

Քակեց ըզբարձրն յաթուոյ,
 Զախեց ըզգլուխն վիշապին:

Ով կուսրն սայ թագաւորաց
 Իւրըն բերէ կործանութիւնս
 Գէմ սատանայ գայն խորհեցաւ
 Հեա Ասաուծոյ իւր Սաեղծողին,
 Որ ի փառաց անկաւ ի վայր,
 Խորտակեցաւ անդրնդայինս:

Յորժամ ձրգէ Ասաուած յաշից
 Ըզգործակից սատանային,
 Հանց խայտառակ հրագարակէ,
 Ձինչ որ արար հեա Բուդայինս:

Տէրըն եզարկ յերկնից ի վայր
 Չընկսայ Բուդին և Արուխին,
 Նայ ամենայն գըլխաւորացն,
 Ձինչ ի մէկտեղ խորհուրդ արինս:

Դու ես, Տէր, խընդրող վըրէժից,
 Ի խոր նայիս անդրնդայինս,
 Լըսեա ձայնի հառաչանաց
 Եւ հեծութեանցըն արնանկինս:

Դու գըրկելոց ես ողորմած,
 Որբերըն Քո են և այրին.
 Տէր, Դու տեսար յերկնից ի վայր
 Ձինչ Քո ծառայքըն քարշեցինս:

Գէմ չի մընաց աղբիւր ու գեա
 Որ լացուցացքըս չի խմեցինս,
 Գէմ չի մընաց լեռներ ու գաշտք,
 Որ Մասասշիքըն չկոխեցինս:

Չըմեռն յարան երթին լալով,
 Լճմառն ի քոչըն քաշէինս,
 Քրսան սարի դար քաշեցաք,
 Որ հալեցաւ ոսիր ու մորթի:

Լոկ շընչաւոր եմք մընացել,
 Խելք, գգայարանք ի մեզ չերեինս:
 Չալալէզինն էր մընացել,
 Նա կու գարնէր աքցի բանինս:

Տէրըն սաստեց խորը աչօք
 Ու ցըրուեցաւ տունն ու բարին.
 Յ
)

Հանց փոխարէն արար Աստուած
 Այն Գրիգորին և իւր ազգին,
 Որ ամենայն մարդ վրկայեաց,
 Թէ օրթախնին անիծեցին:

Սուրբ Յովհաննէսն իրեն խրատով
 Այն անօրէն Թուման-ճուխին.
 Իսկի չածեր զԱստուած ի միտ
 Զունէր երկխւղ ի յիւր սրբախն:

Հանց խորտակէ Աստուած բնաւ,
 Որ իւր ազգովն ամէն ջընջին.
 Տիրասրպան, Աստուածուբաց,
 Լիբբ, Էանամօթ այն շուն Աօֆին:

Հանչաք վաղէ գրոնէ ի դունն,
 Մինչ որ անկնի ի մէջ գրբին,
 Գէմ չարարին հանչաք վրնաս,
 Որ հաւանէր Աստուած բանին:

Կու հրամայէ մեծըն Գաւիթ
 Ժողովրդեան Բարխլոնին,
 Թէ երանի, որ հարկանէ
 Զորդիքն ի քարըն չարկամին:

Մեք վնչ ասենք անձանց մերոց,
 Թէ սնց տեսանք ըզթշնամին,
 Գիտեմ կային հանցեղ մարդիք,
 Որ ի մեր շարըն խընդային:

Երբ նրատէաք ի հրապարակ
 Ամէնն ըզմեղ ծիծաղէին.
 Հանց բարետես աշուի ունինք,
 Որ նորա այլ գլխիվարին:

*) Բնագիրը պակասաւոր:

Թող շյուսանայ մարդ ի դրամ
 Եւ ոչ իգար մարդ ծիծաղին.
 Ծաղաքրն տայ ժուկ մի գեկան,
 Յեան հանէ խիստ ի քամին:

Ով յանկեղուց մարդ կու ճօշայ,
 Գուք նայեցէք հետ իւր քանին.
 Ապա գոյս այլ կամիմ տսել,
 Ձինչ Մասուշիքրն գործեցին:

Խիստ յուսացան ի յանցաւորս
 Եւ պարծեցան յիւրեանց մրաին,
 Թէ մեք շինենք շատ մի թուման,
 Երթանք կախենք գորրն ու դայրին:

Հետ ընկերաց ծուռ են կացել
 Եւ շատ մարդկանց տուն քակեցին.
 Խիստ ապիրատ քան խօսեցին,
 Մեղօք գլխատւած քարկացուցին:

Ձինչ որ արւել էր Տէր նոցա
 Չայն գոհութեամբ հերիք չարին,
 Բարձի թողի արար գամէն,
 Երթայ բղհետ իւրեանց սրաին:

Հանց խարդանաւ Տէրքն ծեծեց,
 Որ իմացան զինչ գործեցին.
 Յորժամ գիտաց թէ խրատեցան
 Եւ զըղջացան յիւրեաց մրաին,

Տէրքն դարձեալ սղորմեցաւ,
 Փոխրէնք արար հակառակին.
 Հանց ստատակեաց Ասատւած գնտաւ,
 Ձինչ Մասուշեց շար կամէին:

Իւրայէլի գերիքն էար
 Չեոն ինք ընկել ի Բուդային,
 Ումեկ հառել էր ի սրբաէ,
 Թէ զինչ լինի ճար մեր քանին:

Դառն և սղորմ ինք մընացել,
 Թէ կրք հասն ենք մեր մարտաին.

Յերկու դիմաց ինք պարտական՝
 Մէկ աստէնիս, մէկ անդէնին։
 Յիւրեանց բարեացըն գրքիկեցան,
 Դէմ յԱստուծոյ շատ մի լացին,
 Գանդատ առցին ի խոր սրբուէ,
 Հասաչանօք դայս ասացին։
 «Տէր, մի հաներ դմեզ ի կենացս,
 Մինչ որ մեր պարտքս վճարին»։
 Զինչ Մասառ չի կան՝ հաւատար
 Ամենեքեան թող ժողովին,
 Որ աղաչենք ըզՏէր Աստուած,
 Որ ցուցանէ Արդուն գանին,
 Թէ չէ աղէկ այն արտասուներն,
 Որ թափեցին Օրդուգանին։
 Կու հրամայէ հողցող անուն,
 Թաշար, Դադան, Սողադօլին,
 Թէ «Շուտ հողչէք դիւրեանց բաներդ,
 Թէ չէ ի հեռ ձեզ պարտովին»։
 Անէծքը չէ ոչում բարի,
 Շուտ կու բրանէ գաղամորդին,
 Աստուած յերկնից ականջ գրքեզ
 Խիստ կու լրտէ մեզաւորին։
 Թէպէտ որ շիշ մի կու դատէ,
 Բայց կու փորձէ դիւր սիրելին։
 Տէր, որ գճունան արեւր կիտին,
 Հաներ արձակ հող յի գեաին։
 Զայս մեղաւոր ծառայքս յեաին,
 Մի տար տանել մեղաց գեաին։
 Ճրթիկն երեսքն ի վայր դրքել
 Եւ արտասուօք թանայր գգեաին։
 Տէր, մի առներ ի մեր դորձոյս
 Մեզ հառուցումըն շար բանին,
 Գու կու անմեղ և անդարատ,
 Հողն սօվ լինի, որ չմեղանչին։

Բաներս աղէկ ու գործքքս վաս,
 Ձիս մի դատել յիմ արժանին.
 Բըժիշկըն չէ ողջաց ի բան՝
 Գէմ դու եկիր վասն հիւանդին:

Յերկնից ի վայր խոնարհեցար,
 Վասըն միոյ մեղաւորին,
 Ողո՛ւմութեանդ կու մընամք,
 Որ վերջք ասնես Դու մեր ցաւին:

Աւուրքս անցաւ հետ ՄԱՍԱՍԻՄ,
 Եզրը շի կայ, հուն չերկին,
 Յաւս երկարեց, է՛ի յոսկր անցաւ,
 Այլ չի մընաց համբերութիւն:

Տէր, վասըն քո Աստուածութեանդ
 Յօղըն հասիր մեզ յատենին,
 Փրկեա՛ւ ըզմեզ ի տանջանաց,
 Երեկոն գերեսս Բոյին:

Տաղիս մէջ սրուած պատմական ակնարկներն աւելի հաս-
 կանալի լինելու համար, կարևոր ենք համարում համառօտակի փ-
 բարտադրել թաթարական արշաւանքի շրջանի պատմական այն
 դէպքերը, որ կապուած են այդ անուճների և դէպքերի հետ:
 Ինչպէս վերնագիրն ևս սոյն է տալիս, խնդիրը վերաբերում է Ար-
 դուն խանին և Բուղային:

Թաթարների արշաւանքների ընթացքում երկու անգամ
 պատմութեան մէջ երևում են Արդուն և Բուղա անուճներն իրար
 հետ:—Առաջին արշաւանքների գործի պատերազմական թափն
 անցնելուց և Հայաստանը, Վրաստանը գրաւելուց ու հարկատու
 դարձնելուց յետոյ թաթարների Աւիաթա խանի մահից յետոյ,
 նորա գահը ժառանգող իւր որդի Գիուզ կամ Գայուզ խանը,
 1246 թուին.

«... սուսքեաց արս հարկապահանջս և գորս իւր, որ
 ի կողմանս և յաշխարհս, գորս հնազանդեցին... ասնուլ տա-
 սանորդս յամենայն ստացուածոց գորուն, և հարկս ի գաւա-
 սաց և ի թաղաւորացն, որ նուաճեալ էին նոցա, ... ի Հայոց,
 և ի Վրաց և յԱղուանից... որոց գլխաւորքն էին հարկահա-
 նացն արք իրաւ և յափշտակողք, անուն միոյն Արդուն,
 որ ամենիցն իշխէր, և երկրորդին Բուղա...» (Պիրակ, 297):

Սակիաննոս Օրբէլեանը յիշատակելով, որ ճայ իշխանները «ժողովեցան ի Տփղիս առ Արղունն որ է վաղիւ և սլաւագազ (տեսուչ) կարգեալ ի մեծ դանէն ի վերայ ամենայն աշխարհիս, այսինքն հրամանատար ամենեցուն և իշխեցող արքունի հարկացն և մեծ դիւանին, որ արար աշխարհագիր դաշխարհս ամենայն 1703 թուականին (=1254)» (Օրբ. 412—13), չէ յիշատակում նորա օգնականին՝ Բուդային: Այս Բուդան յայտնի էր և Ղարա—Բուդա անունով, որ պատմութեան մէջ ոչ պակաս չար անուն է թողել, քան Արարաց արշաւանքի առաջին Բուդան: Չքաւականումնայով սովորական հարկերով, աշխատում էր ձեռք ձգել երկրի իշխաններին և տանջանքով կորզել ինչ որ կարող էր, ինչպէս և արեց Յաչէնի Հասան Չալալ մեծ իշխանին, որին «բազում պատժօք արկեալ» կործանեց նորա Յոյականայ, Դիդ և Միրանաքար բերդերը:— Նոյնը և կամենում էր կատարել Բաւնէ սպասարի որդի Աւագ—Սարգսի հետ, բայց վերջնիս դիմուորական պատրաստութեամբ նորա առաջ ելնելու հանգամանքով, խափանուում է Բուդայի շար մտադրութիւնը: Բարեբաղտաբար «ել վէրս ի փողս նորա... և հեղձամղձուկ» մեռաւ 1246 թուին. (Կիրակ. 297—99. Չամչ. Գ. 221—22):— Բուդայի մահից յետոյ իբրև միակ հարկահան մնում է Արղունը նաև Գիուկ իւանի մահից (Ն 1252) յետոյ թաղաւորող Մանգու իւանի օրով ևս, որը 1254 թուականին,

«առաքեաց... դայր մի սասիկան, Արղուն անուն, որ ի Գիուկ իւանէն առեալ էր հրաման վերակացութեանն հարկացն արքունի... և զմիւս ևս ի գլխաւորաց... որում անուն էր Թօրա—ադա, հանդերձ այլովք բազմօք, աշխարհագիր անել... ևւ նոցա... (հասեալ) շաշխարհս Հայոց և Վրաց և Աղուանից և որ շուրջ զնօքօք գաւառք, սկսեալք ի տասնամենից և ի վեր ընդ գրով համարոյ արկանել զամենեաին, բաց ի կանանց: ևւ յամենեցունց պահանջեալ... հարկս... նեղէին... և որ ոչ կարէր հատուցանել զսակն՝ զմանկունս նոցա անուին ընդ պարտուցն... բայց յեկեղեցականացն ոչինչ առին հարկս, զի շունէին հրաման ի Ղանէն...» — (Կիր. 348—50).

Նոյնը համառօտում Վարդան Բարձրաբերդցին, գրելով՝

«...Յեօթն հարիւր և երկու թուին (=1253—54) Մանգու դանն հրաման ետ համարել զնազանդեալ աշխարհս (=հայոց) ընդ իւրով իշխանութեամբ ի ձեռն առն երկելոյ՝ Արղուն կոչեցելոյ, և զննել հարկս ընդ գլխոյ առանց, բաց ի կանանց և ի բուն ձեռոց և ի մատաղ տղայոց» (Վարդան. 195),

Հայ իշխանների Սմբատ Օրբելեանի դէմ լարած դաւերի պատճառով Սմբատն երկրորդ անգամ ստիպուած լինելով Մանգոյ խանի դուռն երթալու (1256) այնտեղ է գտնուած նաև Արղունին «վասն մատնութեան ինչ... և կայր անդ ի կապանս», որովհետև Արղունին ամբաստանող «Սեինն բէկ ոմն և Շարափաղին՝ զիւան այս աւելաւնի, կամէին սպանանել զԱրղունն և ինքեանք գալ ի տեղի նորաս Արղունն արդարանուալ է Սմբատի վկայութեամբ, և շանեալ ի կապանաց*»... մեծարեաց արքայ դնա և ետ յառաջին գործն» (Օրբել. 412—14)։—

Արղուն երկրորդ անգամ «առաւել պնտութեամբ» Հայաստան գալով՝ հարկապահանջութեան հետ ստանում է նաև նոր իշխանութիւն և դառնում է «մեծ Ռատիկան», որով առիթ է ունենում խառնուելու նաև երկրի քաղաքական անցքերին. ուստի և առիթ է գտնում հետապնդելու Վրաց Շալալի որդի Դաւիթ Թաղաւորին (1260), երբ վերջինս գտնացած անվերջ հարկերից և նեղութիւններից, թողնում է Տիֆլիզը, հեռանում Ափխազների երկիրը և ամբանում Սուանէթ ամրոցում իւր մանկահասակ որդու հետ Արղունը յարձակում է փախած Թաղաւորին բռնելու, սակայն մի խումբ վրացիներից յաղթուելով, այլ ևս ոտ իշխէր այնպէս համարձակ մտանել խուզել զվայրսն» և իբրև իւր վրէժի լուծումն՝ թելադրում է Հուլաուին, և կալանաւորել տալիս Դաւիթ Թաղաւորին՝ Գոնցային, «զիշխանն մեծ Շահնշահ, և զՋալալն Հասան, զաէրն Քաշննոյ... պատճառանօք պարտուց և հարկի», վերջնիս շարաշար տանջանքի ենթարկել տալով, ջնայելով որ Հասան-Ջալալի աղջիկը Ռուզաբանը կամ Ռուզանը, Չարմաղանի որդի Գորա Նուինի կինը, զնացել էր հօր ազատութիւնը հայցելու Հուլաուի կնոջ միջնորդութեամբ, Արղունը շտապում է նահատակել տալ Ջալալին († 1261)։ (Կիրակ. 373—75. Օրբել. 412—14)։— Նոյնպիսի դառն մահով սպանել է տալիս (1261 թ.) նաև մեծ իշխան Շահնշահի որդի Չարաբէին. (Կիր. 377)։

Արղունին պատմութեան մէջ վերջին անգամ հանդիպում ենք 1282 թուին, երբ Սմբատ Օրբելեանը վախճանուելով անդաւակ, «որդիացուցեալ ինքեան» իւր կորօր որդի Տարսայիճին «զնաց ի մեծ զիւանն արքունի առ Արղունն և Մահիպն ի Դավրէժ... և անդ հիւանդացաւ... որ և մեռաւ իսկ» († 1282)։ Մահուանից առաջ իւր իշխանութիւնը յանձնելով Տարսայիճին, վերջնիս ևս յանձնարարում է Արղունի, իւր բարեկամի, խնամքին. (Օրբ. 419—20)։

*) Պատմ. Սիսական. հրատար. Ղուկասեան մատենադարանի. Թիֆլ. 1911.

Առաջ քերած պատմական այս համառոտակի քաղաքացիների մէջ շատ քիչ բան կայ, որով կարելի լինի Թրիկի այդ տաղի հետ որ և է աննշուխիւն ունեցող պատմական դէպք բացառել և ժամանակը որոշել, եթէ միայն հաշուելու շինենք Արղուն և Ռուզա անունները:

Այս երկու անունների միաժամանակ յիշատակութեան երկրորդ անգամ պատահում ենք Թաթարների տիրապետութեան յետագայ շրջանում, միաժամանակ այն միւս բոլոր պատմական անունների հետ, որ հանդիպում ենք Թրիկի այդ տաղի մէջ.

Մանգու խանի եղբայր Հուլաուն, որին Օրբէլիան ամեծ և բարեպաշտ արքայն աշխարհակալ, յոյսն և ակնկալութիւնն քրիստոնէից» (Օրբ. 419) է անուանում, մեռնում է «ի 713 թուին» հայոց (=1264—65) և նորա տեղն է անցնում նորա որդին՝ Ապաղա խանը կամ Աբաղա էլխանը. (Կիր. 378.—Օրբլ. 419. Չմշ. Գ. 261—62). որ տասն և ութ տարի «բարեյաջող յաջողութեամբ» խանութիւն անելուց յետոյ վախճանում է «յ731 թուականին» (=1282) թողնելով իւր յետեից յիշատակ իրբն ռայր հեղ և բարի և խաղարար. և սիրող քրիստոնէից»: Սա կնութեան էր ատած «զգուսարն կայսերն յունաց (զՄարիամ) Դեազինա» նախապէս խոստացած լինելով «ընկալեալ զքրիստոնէութիւն՝ մկրտտեացի». (Օրբլ. 470.—Չմշ. Գ. 263.—Կիր. 382):

Դեռ ևս Հուլաունի կենդանութեան ժամանակ, նորա դէմ ծագած ընտանեկան ներքին երկպառակութեան կռիւները ճնշելու համար, Հուլաուն 1262 թ. իւր եղբոր Ապաղայի որդուն՝ Արղունին ուղարկում է Սորասան, ուր և վերջինս մնում է ոչ միայն մինչև հօրեղբոր մահը (՝ 1265), այլ դեռ ևս հօր կենդանութեան ժամանակ իսկ: (Կիրկ. 379):

Ապաղայի մահից յետոյ (1282) ներքին ընտանեկան երկպառակութիւնը կրկին զլուխ է բարձրացնում և վտխանակ սրդին հօրը ժառանգելու, արքայական գահը

«... նստի Թագուտարն, եղբորորդի նորին, դան, առ մենայն աշխարհի, որ և Ահմադ անուանեաց զվերն. և խորհեցաւ ասնել մըսլման զամենայն ազգ. և յերբորդում ամի ակրութեան իւրոյ (1285 թ.) ետպան ի Մուզան զմիւս եղբայրն զՂաւնդրաթայն և զսուլտանն Հոսամոց զԹիաթազինն և զերկուս որդիսն Յազանին». (Օրբ. 425),

որպէսզի գահաժառանգութեան ուղին հարթուէր իւր անմիջական սերնդի համար. բայց քանի որ դեռ ևս Ապաղայի անմիջական յաջորդը՝ որդին կենդանի էր, ուստի,

«... ի գարնանային ժամանակին գնաց (1286) անհուն դօրօք ի Սորասան ի վերայ Արղունին, որպէս Ապաղա,

խանիկն, զի սոցանցէ դժտոանդ թաղաւորութեանն» (Օրբ. 425):

Այդ արշաւանքի նեականքը ծանր է լինում Արղունի համար, որին «կալիալ դարձաւ աշտընն», առում է Օրբէլեան, աշտինքն Արևելիեան Հայաստան, որտեղից իւր արշաւանքն էր սկսել: Պատասխան ներքին մի դաւադրութեան շնորհիւ, աւազանու համակրութիւնը և

«... մեծամեծացն (դարձաւ) առ Արղունն, զոր հանկալ ի րանցէ կապանացն՝ թաղաւորեցուցին և սուր ի վերայ եղևալ կատարեցին զամենայն թշնամիս նորաւ Հասեալ զկնի սասակեցին զԱնձաղն և զհամահոխս իւր զՀասան Մանլի շէխն, զՍանիլայ զիւանիկն⁷⁾ զԱլինախն և զայլ բազումս» (Օրբլ. 426):

7) «Սանիլայ—Իւանիկ» անուան յիշատակութիւնն ունինք և նոյն շրջանի սրտամտութեան զանազան դէպքերի մէջ յիշատակուած աշտպէս, 1) Անիի Տէրերի վերակացու կամ պատրոնների շարքի մէջ նան յիշուած ենք «Սանիլայ Իւանիկ (որդի Աւագայ որդւոյ Իւանէի)» անունով մէկին, 1263 թ. իշխած. (Ալիշան, Շիրակ, էջ 101 ա). 2) նոյն 1263 թ. Անոյ արձանագրութիւնների մէջ կարգում ենք— Չժի [= 1263] էլզանին: Շնորհիւն Ասատուոյ մեք ստաղմածիքս վասն յերկար կենդանութեան և վասն պատրոնաց ամերոց Սանիլայ Իւանիկն և Սանձաախն և Քարիմաղինին բարձաք ի յԱնս իրիցանուս դրածն. ...» (Ալիշան, Շիրակ, 62 ա.—Սարգսեան, Տեղագր. 133 —Կոստանեան, Վիմակ. Տարեգիր, 106).— 3) Բջնի արձանագրութիւնների մէջ կարգում ենք— «Յուսոփե անձահին Ասատուոյ ևս Չաքարէ, որդի Սանիլայ Իւանիկն և պարոն «Սաւաքին, թան սթարակ Աւագին, որդւոյ սթարակ Իւանէի... ի վերայ կալայ, որ ի Բջնի աղ մարդոյ տիրութիւն շէխի և թոյի «զամէն հարկ, զամիրաճակն, զհարսանէհակ, (= զհարսանէհարկ?), «զկովայճամարն, զկալաթաղարն, զսայլի ս՝ պն, զմանկանէն, և սաւտարականն քան զդադմէն այլ իրք շտայ, յաղման շանէն...» որով վերացնում է ամեն տեսակի հարկ. (Շահխաթ. Աստրաղր. հ. 484. —Բ. 183.—Կոստ. Տարեգիր, 226.).— 4) Անիի արձանագրութիւնների յետագայ շրջանում 1320 թ. դարձեալ հանդիպում ենք նոյն անուան յիշատակութեան նեակեալ արձանագրութեան մէջ.— «Թվ. Չկթ. ողորմութեամբն Ասատուոյ ևս Սուանդղէս զուգակից Աթարակ Շանշահի որ յայտ ամի էլ յաշխարհէ և սրտամտիւն մեծ եղև մեզ և աշխարհիս արեկից, ևս ամուսին նորա զուսար Շամեաղիկն Սանիլայ Իւանիկն... թողնում է իւր հայրենի քաղաք Անիի «զկովերոյն և զիշանուսն զհամրերեղէն և զդանաղիրն մեծի և փոքու...» (Ալիշան, Շիրակ, 62):

Նորա առաջին գործերից մէկն է լինում Արևելեան Հայաստանի մէջ ներքին երկպառակութիւնների շնորհիւ ծագած խռովութիւնները վերացնել, ներքին կարգն ամրացնել և թէ Հայ ու Վրացի և թէ Աղուանից իշխաններին իւր կողմը դրաւել, այդ նպատակով Դաւիթ թագաւորի որդուն վերահաստատում է Վրաստանում, Օրբէլեան Տարսաճիճ իշխանին տալիս է «ղաթարէկութիւն աշխարհիս Հայոց», իրեն ցոյց էր տալիս

«... յոյժ սիրող քրիստոնէից և եկեղեցեաց... և րազում դիւրութիւն և սղորմութիւն ասնէր նեղեալ ազգիս Հայոց: Եւ գնացեալ 'ի Տփղիս' ետ բերել զգիւանն արքունի և ընթերցաւ զամենայն դաւքարսն, և զի էին գրեալք ի դաւթարն անուանք վանօրէից Հայոց ի ներքոյ հարկի և դիւանի կայցեն. ապա ետ բերել զձեկնաւպար աւագ գիւանագարութեանն և փոխեաց զդաւքարն և եհան զանուանս վանօրէիցն աւելի քան 4150, և զհինն այրեաց հրով, և աշխարհս ազատեաց զամենայն եկեղեցիս: (Օրբէլ. 426—27):

Սորա այնպիսի դնահատելի արժանիքներ էին մի ժողովրդի աչքում, որ մինչ այդ ժամանակ միայն հալածանք, նեղութիւն, գերութիւն, հարկ ու վիշտ էր տեսել, որ առանձին համակրութիւն է ունենում զէպի Արղունը, որ «սղորմած և զթած եղև առ ամենևսեան» և նորա իշխանութեան հասնելն այլ կերպ չէր բացաղրում, քան, որ «Աստուածն քրիստոնէից» էր դրդել աւագանիին Արղունին իշխանութեան կոչելու, թէև այդ համակրութիւնն ու բարեկամութիւնը քաղաքական խնդիր էլ էր, որպէսզի քրիստոնեաների օգնութեամբ կարողանայ թշնամիներին, յատկապէս Եգիպտացիներին, տիրել: (Օրմանեան, Ազգ. էջ 1705)*: Արղունն ևս զէպի հայերն ունեցած իւր համակրութիւնն աւելի ընդգծելու համար Տարսաճիճ աթարէկի, իւր թեարկեալի որդուն՝ Ստեփանոս Օրբէլեան միտրօպօլիտին ընդունում է մեծ պատուով (1287) և «յոյժ հաճեցաւ և հրամայեաց զրել նմա... ետալլիս. և հաստատեաց զամենայն եկեղեցիս և զաշխարհն և զեպիսկոպոսունսն ի տ. Ստեփաննոս. և ետ նմա այր ի դրանէն և փայիզայ և այնպէս յուղարկեաց յաթոս իւր»: (Օրբ. 429):

Ահա այս ընդհանուր համակրութեան իբրև մի արտայայտութիւն է և Թրիկի «Վասն Արղուն զանին և Բուղային» տաղը, որի առաջին իսկ տողերից պարզ երևում է թէ երգչի, — որ ար-

* Ազգապատում. Մաղաքիա արքեպս. Օրմանեան. 1912. Կ. Պօլիս. Ա. Բ. հատ.

տայայտիչ է այս դէպքում բնականուր ժողովրդական զգացումների, — համակրութիւնը որի կողմն է Դառնալով Բուդային նա հարցնում է.

Ե՛րուզան, դու սնց կամիր նենգել

Աստուածաղիք թագաւորին,

Ձոր քրիստոնեայքն ամեն հաւասար

Ի յԱստուծոյ կու խնդրէիմ:

Որով երգիչը պատմական նշաւթեամբ տալիս է մեզ այն յոյսերի ամբողջութիւնը, որ քրիստոնեայքն ամէն հաւասար ազօթելով էին որոնում այդպիսի մէկին. որովհետեւ շատ հետուչէր դեռ այն ժամանակը, երբ Արղունի նախորդը խորհում էր բառնել մտքման գամենայն ազգս, իսկ սա նկեղեցիները, վանքերը ապահարկ է անում, կրօնաւորներին ազատում տուրքերից, երկրի մէջ կարգ ու անդորրութիւն է հաստատում և ժողովրդին շունչ քաշելու հնարաւորութիւն տալիս: Անհնար էր, որ այդպիսի ժողովուրդը շատէր:

Արղուն դանըն Աստուած նղիր

Ո՛վ է յաղթող Արղուն դանին.

Արղունըն ի՛նչ վնաս գործեց

Գիտեմ որդին էր Արաղին:

Վերջին տողից արդէն երևում է Յրիկի ժամանակակից անձն լինելու պարագան, որը պիտե՞ս թէ ո՞վ էր Արղուն խանը: Այստեղից հետզհետէ առաջ են գալիս պատմական այն անցքները որ տալիս է տաղս, և որ կաշխատենք պարզել համառօտակի:

Այն որ ըզքեզ ի վեր քաշեց

Եւ քեզ երես գամէն բարին

Այնոր փոխըէն զի՛նչ խորհեցար...

Պալատական նոր զուգադրութիւնների շնորհիւ, պէտք էր ապահովել իւր գահի յարատեւութիւնը, եթէ ոչ իւր նախորդի պէս ինքն ևս կարող էր մի գիշերուայ մէջ գահազուրկ և կենազուրկ լինել: Արղունն, ինչպէս երևում է, համեմատաբար աննշան մարդկանցից չվեր էր քաշել թէ Արուխին և Բուդային, և նոցա նմաններին: Երգիչը պատմական նշմարտութիւնը կրկնելով, բայց և իւր նուրբ հեզնանքն ու անհամակրութիւնը չթազցնելով, ասում է,

Դու քան զԱրղունըն չի՛ր պակաս,

Ի քո յանէզ խիստ կու վախին:

Բուզա էիր՝ շինքսանս եղար,

Բէշար սէկի իր հեծելին.

Չգիտեմ թէ զինչ կամիր լինել.

Իս չիք սրդի Չինկըզ զանին.

Հետևարար պէտք էր քառականանայ այն ամենագոր դրու-
թեամբ, որին հասցրել էր քեզ Արզուն խանը, որովհետև

Իս քան զԱրզունըն չիք պակաս

Ի քո յահէզ խիստ կու վախին:

Իբրև ճակատագրական տեսութեան հաւատացող, որ մա-
նուանց աւելի ևս աչքի է ընկնում իւր «Վամն Թալաքին և Բուռ-
ջին» և «Ընդդէմ Թալաքին» ապոկրի մէջ, Թրիկն բմբուսանում է
այն մտքի դէմ, թէ

Չինչ ի վերուստ քեզ չէր տըւած

Իս երբ կարիր համնել բանին.

Չոնալն խիստ ի վեր քարշէ,

Յետև զարնէ խիստ ի գետին. —

որի օրինակն իւր առաջն էր, նա առջիսորն ամէն» վկայ է կան-
չում, որոնց մտքից դեռ չէր ելած այդ դեպքը, թէ

Տեսէք թէ ինչ արար Աստուած,

Ի հատուցումըն հրդօրին, —

Նորա բմբուսացած, շափից աւելի իւր սեփական սյծերի վրայ
գառահայած ձեռնարկութեան պատճառով, որի հետևանքն այն
եղաւ, որ

Քաշեց քրարձըրն յաթուոյ

Չախեց ըզզուխըն վիշապին, —

որովհետև ժողովրդական իմաստասիրութիւնը հասցրել էր նորան
այն խորին համոզման, թէ «խիստ է ընդդէմ խթանի արացել»
կամ սրդի գլխին թանցքով առ չի լինել», որ արտայայտում է
այսպէս.

Ով կուրն տայ թագաւորաց,

Իւրըն բերէ կործանութիւն:

Եւ այդ կործանութիւնը շատ չէ աւշանում այն անձի նկատ-
մամբ, որին

Յորժամ ձգէ Աստուած յաշից...

Հանց խայտառակ հրատարիէ,

Չինչ որ արար հեռ Բուզային:

Այն է՝ շրջանակաւ շարժուող զգոնակաւ զոս յանձնարար
 իւր մէջ
Տէրն եզարկ յերկնից ի վայր
Չընկապ Բուդին և Արուխին.
Նայ ամենայն զլիաւորացն
Զինչ ի մէկտեղ խորհուրդ արին:

Այն, ինչ որ Արդունը նախատեսել էր և կամեցել էր քաղաքագիտական միջոցներով առաջն առնել, շուտով երևան է գալի իւր գահակալութիւնից 3—4 տարի անցած. իւր իսկ ձեռքով չի վեր քաշած մարդոց շնորհիւ որովհետև

«... երկազառակեցան զօրքն զան Արդունին, և անկաւ շփոթումն մեծ ի մէջ մեծամեծացն զլիաւորաց...» (Օրբ. 430):—


Այդ շփոթութեան մասին անտեղեակ չէր Արդունը, որ ի մօտոյ հսկում էր իւր համախոհների միջոցով այդ ամենի վրայ, սրտնցից մէկը «Սուլթան—աղան... իմացաւ» ուստի,

«... և հանին քաղում արեան հապաղիս. զի կայաւ Արդուն զմեծ զօրապետն զԲուդայ ջինխանին, որ կոչի աւագաց աւագ կամ աէրանց տէր, և Եսպան զնա. զի խորհուրդ նենգութեան էին խորհեալ նմա և ընդ նմա և զամենայն համախոհանորին զՂազանն և զԹուխլուխ հազարապետն զԱրուխն, զԱւճանն և այլ քաղումս... և զքաղաքաւորն զԹաղաւորն Վրաց Դեմետրէ բազրաղելով եղին ի վերայ բարուրս մահու և տարեալ սպանին... ի մեծ դաշտին Մովկանայ, յեզր գետոյ-Կուրայ, ի Թուին 738. (=1289):—Օրբէլ. 430:

Օրբէլեանի այս կոչումից երևում է, որ Բուդայի և Արուխի հետ, իրենց համախոհներից ոմանք ևս սպանուեցան, այն է Ղազանը, Թուխլուխը, Աւճան, աւերացնելով որ դատապարտուածների շարքն այդքանով չէր վերջանում. այլ մահ գտան թե այլ բողոքումս առանց անունները յիշատակելու: Պատմիչի այդ թե այլ բողոքումս անորոշ բառերը լրացնում է Զրիկը.

Տէրըն սաստեց խոլոր աչօք

զաւաղրութիւն կազմողներին և
Հանց փոխարէն արար Աստուած
Այն Գրիգորին և իւր ազգին,
Վայնքն ս. Լուսաւորչի հովանին վայելող Հայց ազգին,
Որ ամենայն մարդ վրկայեաց,
Թէ օրթախնին անիծեցին,



այսինքն, որ «օրթախները» ընկերչակ-դաւառիրները դատապարտութեան՝ անէծքի արժանացան, որոնց նկատմամբ նոյն իսկ թաթարների հովանաւոր Սուրբ Յովհաննէսն իսկ երես է դարձնում.

Սուրբ Յովհաննէս իրեն խրոսով
Այն անօրէն Թուման-Ճուխին,

որ մինչ այն աստիճան մտաւցել էր իրեն և ամեն ինչ, որ

Իսկի չաժեր դԱտոււած ի միտ,

Չունէր երկիրդ ի յիւր սրբախն:

Հանց խորտակէ Ատոււած ըզնա,

Որ իւր ազգովն ամէն ջրնջին

Տիրասրպան, Ատոււածուրաց,

Կիրք, և անամօթ այն շուն Սօֆին:

Այսպիսով պատմագրի մտաւցուած երկու անուն, շնորհիւ մերիկի այս տաղի, այն է «անօրէն Թուման ճուխի» և «անամօթ շուն Սօֆի» անուններն աւելանում են պատմական կեղեքիչների այն շարքին, որ Հայ ազգի ոսկր ու կաշին իսկ հալեցնելու ոչ մի Հանք չեն ինայել: Այրուած սրտի, հոգեկան դաճնութեան փոքր ինչ միսթարութիւն էր այդպիսիների նկատմամբ «Ատոււածոյ դատաստանի» արագ հատուցումը երգչի աչքում, և նա իւր նուրբ երգիծանքով իւր թշնամիների հասցէին մի առանձին բաւականութեամբ է ուղղում ընկճուածի հրճուածքը,

Գիտեմ կային հանցեղ մարդիք,

Որ ի մեր շարուն խընդային.

Երբ նըստէաք ի հրապարակ

Ամէնն զմեզ ծիծաղէին,

Բայց և այնպէս

Հանց բարեաես աշունի ունինք,

Որ նոքա այլ զըլխիվայրին:

Թէ «Ատոււածոյ դատաստանը արագ համնել» կարող է, այս դադստիարը, համարեա, դարու մտածութեան, ոգու արտայայտութիւն է, որ նկատոււմ ենք նաև Օրբելեանի մէջ. նա մի առանձին բաւականութեամբ է պատմում «թէ օրպէս փոյթ ընդ փոյթ էառ Ատոււած զվրէժ պատուհատին... և ինչպիսեաց իրաւունս» (Օրբլ. 443), երբ պատմում է իրեն աթոռ տուող Կոստանդին Գրոնազօրծի դատապարտութիւնը, և զաջորդող Սահփաննոս Դ.-ի դերութիւնը զէպի եզիպտոս. (1292 թ.):

Մինչև այսուհի Զրիկի տաղի մէջ եղած պատմական տեղեկութիւններից երևեցաւ, որ տաղս գրուած պիտի լինի ո՛ր ամառն էան 1282 թ.: Սակայն հետևեալ տողերը պատմական-ժամանակագրական այդ թիւն աւելի մօտեցնում են դարու վերջին: Իսլազիրների մահուան մասին զանազան խորհրդածութիւններ զրդում են նորան բողոքել, ըստ իւր հայեցակէտի, մի անմեղի արեան թափելու դէմ. որ կամենում է նաև հրապարակով պաշտպանել.

Զինչ Մասաւ չի կան կան՝ հաւասար
 Ամենեքեան թող ժողովեն,
 Որ աղաչենք զՏէր Աստուած,
 Որ ցուցանէ Արդուն դանին,
 Թէ չէ աղէկ այն արտասուքն,
 Որ թափեցին Օրտուղանին:
 Սա հրամայէ հոգցող անուն
 Թաշար, Ղազան, Սաղաղալին,
 Թէ՛ «Շուա հոգցէք զիւրեանց բաներդ,
 Թէ չէ ի հետ ձեզ պարապին»:

Էնպէս որ երկու քառուկի մէջ բաւական խառն է, որովհետև պատմական անցքերին և անձերին անձանօթ յետագայ գրիչը չէ կարողացել յատուկ անունները որոշել և ճշգրտութեամբ գրել: Այսպէս ՉԹ-ն ունի բոլոր թափեցին աւր բախրնիք՝ որ յայանապէս պէտք է կարդալ «Աւրդուխանին», և ապա շարունակութիւնը՝

Սա հրամայէ հոգցող անուն
 Թաշար, դուշան, սա զաղալին,
 որ պէտք է կարդալ իբրև պատմական անուններ՝ Թաշար, Ղազան, Սաղաղալին, որ Ղազան անունը ամենայն հեշտութեամբ կարող էր խեղաթիւրուել և դուշան դառնալ, ա և ուրիշ տառերի ձեռագրական նմանութիւններից. իսկ Սաղաղալին անունը՝ Սա զաղալին ոչինչ չնշանակող ձևակերպութիւն ստանալ: ՉԹ-ի մէջ սպրդած այդ թխալներն իրենց պատմական արժէքին վերածելու իրաւունք է ստալիս մեզ Օրբէլեանը:

Պատմելով նոյն այս Արդուն խանի մահը, պատմիչը գրում է. —
 «... Եւ պատճառ մահու նորա եղև հարձ մի յոյժ սիրեցեալ, յորմէ զեղակուր լինի և վճարի ի դաշտին Մուղանայ ի տօնի Թէոդորոսի»): Որ և ի մահուան նորա լինի կո-

*) 1289 թ. (Ղեթում Պատմիչ Քաթարաց. Աննիտ. 1842. էջ 85), յունիսի 8-ին (Օրմանեան, Ազգապատում, էջ 1707):

տորուած բազում մեծամեծ աւագանւոյն՝ Խոզանին, որ էր գանձապետ արքայի, և Սուլտանին, որ էր ի վերայ կերակրոցն և ըմպելիացն, և Չիբուին և Աւրտուղանին, որք էին ի վերայ դատաստանացն, և մեծ զիւանին Սաղաղալին՝ բարեբարոյ Ջհաին, որ էր ի վերայ ամենայն հարկաց աշխարհիս... Զօրագլխացն և մեծամեծացն եղեալ յերկփեղկս՝ սմանք կոչէին զՔայաուն ի Քաղղատայ՝ ազգական Արղունին, զի զիցեն ի տախան արքայութեան, և ունաք փութացուցանէին զեղբայր Արղունին զՔեղաթուն ի Հոսոմոց: Որ և եկեալ նստաւ ի տախան արքայութեան՝ զան ի վերայ ամենայն աշխարհի, ի թուականութեան Հայոց 740 (= 1291) — Օրբէլ. 467—68.

Արղունի ազգական Քայաունի (որ Ապաղայի կին Մարիամ Իեսայինայի որդեգիրն էր) և իւր եղբայր Քեղաթունի՝) մէջ ժառանգական իշխանութեան համար պատերազմ ծագելով, և իրար զէմ մաքառելով խանական թախաղ գրաւելու համար,

«... զայ ի Սորասանայ Ղազանն, որդի Արղունին, որդւոյ Ապաղային, ... ի խնդիր հայրենական աթոռոյն, ամենայն զօրօքն Սորասանայ... որոց զօրագլուխք՝... Սուլթաու շահն... և անյաղթն ի պատերազմունա և բաղմահնարն Նաւուզ... որդի Արղունին**), որ եկեաց պետ և պատխաղ ի վերայ ամենայն աշխարհիս. և բազում սնիրս գործեալ էր ապստամբութեամբ ընդ Արղունին և որդւոյ իւրոյ Ղազանին և այժմ միարանեալ էր ընդ սմա... Յորմէ երկուցեալ մեծ բիւրապետին Քալաթին՝ զնաց և խանեցաւ ի Նաւուզն»... (Օրբէլ. 470—71)

որի հետեանքն է լինում Քայաունի յաղթուիլն ու զերի ընկնելը, և Ղազանի յաղթութիւնը, որին «և նստուցին... ի տախա արքայութեան հօր իւրոյ Արղունին», 1295 թուին:

Գաղմական այս կոչումներից շատ պարզ է, որ Չի—ի մէջ աղաւաղուած բառերը բնագրի մէջ որոշ պատմական անուններ էին և յայտնի դեր կատարած անձեր, որոնք Արղունի իշխանութեան ժամանակ որոշ դիրք ունէին, — Օրղուխանը՝ իբրև դատաւոր, Սաղաղալին՝ իբրև Սանիպ զիւանի կամ «մեծ Իրւանի», որ 1286 թուականին միւս Սահիպ-զիւանի «մեծ խոջային» ուղանելուց յետոյ (Օրբէլ. 426), հաւանօրէն նորա տեղն էր անցած, Ղա-

*) Հեթում էջ 59. — որին անուանում է և Ռէզայիտ, Երեմի-Քուրեմի մականուամբ, որ նշանակում է գտաւ գիտութեայն:

**) Նախորդ հարկահաւաք Արղունի որդին էր. տես վերը:

զանք՝ իբրև Արղուն խանի հարազատ որդի և Քաշարն՝ իբրև քիւրապետ և հաւատարիմ յաղթական զօրավար, որ Արղունի մահից յետոյ պահ մի անցնում է նորա հակառակորդների շարքը, քայց հեռաանուօթեամբ նորից վերադառնում նորա որդու համակրողների շարքը, ինչպէս և նաւաուզը:

Պատմական այս եղելութիւնները թեթև ակնարկով միայն անցնող և իբրև ամենքին շատ լաւ յայտնի դէպքերի ու անձերի մասին մի ակնարկն ևս բաւական համարող այդ յիշատակութեան եղանակը, շատ պարզ ցոյց են տալիս, որ Ֆրիկը շատ մօտ ծախօք էր այդ բոլոր անցած-դարձածին, ապրած այդ կեանքը և շրջանը, համարեա այն շափով որ շափով տեսնում ենք պատմաբանի դեր առած Ստեփաննոս Օրդուխանին:

Եղբակացութիւնը պարզ է, որ Ֆրիկն ապրում էր այդ ժամանակամիջոցին և լաւ ծանօթ, — ականատեսի ծանօթութեամբ, — Արղուն խանի իշխանութեան բոլոր դէպքերին, այն է մինչև 1291 թուականի վերջը:

Ենթադրել, որ Ֆրիկն իբրև յետագայ դարերում ապրած մէկը կարող էր լսած կամ կարդացած լինել այդ ամենը և իւր տաղը երգած, — անհնար է. նախ նա կարդալ չդիտէր, ինչպէս տեսանք. երկրորդ՝ այդ ամենից ականատեսի, այդ կեանքով ապրած երգչի տպաւորութիւնն անհերքելի է, որը միայն կարող էր տալ այդպիսի մանրամասնութիւններ, անձերի անսխալ ու սրտակի անուններ, միմիայն նոյն ժամանակին ապրած, նոյն կեանքով տառնալից մարդը, որի տպացոյցներն առաւ ևն վերն առաջ բերած ստղի մէջ:

Վերն առաջ բերած երկու քառատողն, ըստ իս, այսպէս պէտք է հասկանալ. Օրդուխանն ևս, ինչպէս և նաւաուզը, որոշ ժամանակ հակառակորդ են եղել Արղունին, ապա դաժնապէս պատճառներից զրդուած անցել են Արղունի կողմը, որի սրտից բնական էր, չէր անցել կասկածը և որը թերևս նեղել ու տանջել էր Օրդուխանին, որի համար և երգիչն Արղունին մեղադրում է թէ չէ աղէկ այն արտասուքն, որ Օրդուխանին թափել է տեսել. տպագայում նորա հաւատարմութեան յայտնի գրաւական ստանալով նշանակում է շղատաւոր, որ իբրև հաւատարիմ մէկն Արղունին, իբրև «հողցող անուն» զգուշացնում է քիւրապետ Քաշարին, դաժնաժառանգ Ղաղանին և մեծ դատաւոր Մաղաղաւին, թէ

Շուտ հողցէր դձեր բաներդ,
Թէ չէ ի հետ ձեզ պարապին.

այսինքն չիմնասն եղած Բուդայի և Արուխի պէս «ի վեր քաշած» և իրենց տիրոջ դէմ ապստամբութիւն նիւթող անձեր, իրենց

հաշիւը ձեզ հետ կարող են տեսնել, «ի հետ ձեզ պարապել»:

Թէ Զրիկն ապրել է Թաթարների արշաւանքի ժամանակաշրջանում, մեզ համար որեւէ կասկած չեն թողնում այն հաս աւ կտոր ակնարկները, որ գրուած են նորա տաղերի մէջ:

Վերն արդէն տեսանք, որ իւր տաղերից մէկի մէջ նա պահանջում է, թէ

Ոչ տուն, ոչ տեղ ունիմ, կու խոցիմ

ի յանհաւատնուն.

որ պարզ ակնարկէ Թաթարների նկատմամբ:

Մի այլ տեղ, քաջութիւնը գովելով, ասումէ,

Յորժամ մանկութիւն ցուցնէ

ի դանէն պարգեք գտանէ.

ԺԹ. 23.

Իւր մի այլ տաղի մէջ Զրիկը գանգատում է.

Ես ինչ գիտէի, եղբարք, թէ մեզաց դարն հանց

լինենայ,

Ձինչ որ կու քաշեմք հիմիկ շատ շարիս և վրձար

չի կայ-

որ պարզ ակնարկ է իւր ժամանակի՝ Թաթարների տիրապետութեան օրերի կրած նեղութիւնների, երբ անվերջ «չարիս» էին կրում և որին «վճար չի կայ», վերջ չը կայ, և որ համեմատելով «մեզաց դարի» հետ, որի մասին ազատ գաղափար ունէր, կարծում է, որ գորանից աւելի նեղութիւն և շարիս պիտի չկրէին մարդիկ:

Իւր «Ընդդէմ Ֆալաքին» գեղեցիկ տաղի մէջ այդ ակնարկն աւելի ևս պարզ է.

Չանգէտ աւ գնաքաս մարդըն

յաստընւորս աունես ձեռնաւոր,

Չիմաստուն մարդկանց ըզհացն

կու ձգես ի սար կամ ի ձոր.

չիմիկ դըժարեց ըաներս,

որ Թաթարն եղաւ թագաւոր,

Չըրկեց գամենայն աշխարհս

ու զգողերն եզիր մեծաւոր.

Այս այլ չի մընայ հանցեղ

ու Ֆալաքն ոչում կարևոր,

Զարնու և ձգէ ի վայր:

Համարէ գոչոք թագաւոր:

Իկ. 17—22.

Ֆրիկի ժամանակի ու շրջանի որոշման համար մի առանձին կարևորութիւն են ստանում այդ հաս ու կտոր ակնարկները, մանաւանդ վերջին տողերը, ուր գանդատուելով բազդի փոփոխական խաղերի և անիրաւացի իրականութեան դէմ, որ քմհանջով «գիմաստուն մարդկանց գհացն ի սար կամ ի ձոր» է ձգում, կամ «ի գիտուն մարդն» խոյր նայում, որոնցից մէկն էր համարում, հաւանօրէն, և իրեն, իսկ «զանգէս ու զնարաս մարդն յասարնուորս ձեռնաւոր» դարձնում, Թրիկն անյոյս գանդատի ձայն է բարձրացնում, թէ

Հիմիկ գրժարեց բաներս,

որ թաթարն եղաւ թագաւոր.

Զբրկեց զամենայն աշխարհս

ու զգոզերն եղիր մեծաւոր:

Այսքան պարզ ցուցում ժամանակի նկատմամբ այլևս տեղիք չեն թողնում ճշմարտութեամբ որոշելու նորա ապրած շրջանը:

Ֆրիկն իրաւունք ունէր գժգոհ լինելու թաթարների ընդհանուր տիրապետութեան շրջանի կարգերից, ընդհանրապէս՝ իրրե իւր սիրած երկրի աւեր ու կործանման պատճառ, մասնաւորապէս՝ աւելի ևս պիտի զգար այդ նորա սիրտը, կսկծար և բողոքէր այդ տիրապետութեան դէմ, որոհեաւ իւր սեփական գաւազն էր «գրաւ դրած ուստի ճուղասց գնալուն» համար: Հասկանալի է, որ այդ բոլորը պիտի արտայայտուէր նորա տաղերի մէջ և այդ գժգոհութիւնը հանրութեան բաժին դառնար, պախարակելով այն տիրապետութիւնը, ուր «գոզերն են մեծաւոր» և որոնք առանց քաշուելու «զամենայն աշխարհ» են գրկում:

Թաւ թէ թաթար իշխաններն ևս բարի աչքով չեն նայել այդ ըմբոստ հոգու վրայ, որի հոգու անձնական ըմբոստացումների արտայայտութիւնը, իւր տաղերի շնորհիւ հանրային սեփականութիւն են դառնում, իսկ անբաւականութիւն և դսպուած գժգոհութիւն մնուցանելով իրեն լսող ու երգող ժողովրդի մէջ: Հաւանօրէն թաթար իշխաններն ևս նոյն դրամով են հատուցել իրենց համակրութեան և հակակրութեան արտայայտութիւնը, այդ «մեղաւոր և աղքատ», բայց «ուստի ճուղասց» տալու ընդունակ յանդուգն աշուղին, և արգելած պիտի լինին Ֆրիկի տաղերի ազատ երգելն ու տարածումը: Մանաւանդ, որ նորա այդ բողոքի վերջին երկտողը, ըմբոստացողի զօրեզ ձայնի հետ և հետա-

ուր ապագայի յայտելի մի նշոյլ է տալիս, թէ

Այս չի մընայ հանցեղ
ու Թալաքն ոչում կարևոր՝

Չարնու ու ձրգէ ի վայր
չ համարէ զոչոք թաղաւոր:

Այսպիսի մի ենթադրութեան հանգելու մեղ իրաւունք է տալիս այն հանդամանքը, որ նորա հոգեկան բնութանցման այդ բողոք տողերը մեր աչքի անցրած տաղարաններից մեծագոյն մասի մէջ չկան, հանուած են, և այդ «գրաքննական» արարքը թերևս շատ կանուխ ժամանակի գործ է, սրով և արտագրող գրիչները զուրկ են եղել այդ տողերը իրենց տաղարանների մէջ հնարաւորութիւնից մտցնելու: Այսպէս՝ Երուսաղէմի № 743, Վիեննայի № 797, Ս. Ղազարի № 1823, Անտոնեան միաբանութեան № 216 և նոցանից իրրև արտատպութիւն հրատարակուած «Սիօն»-ում և Ա. Չոպանեանի «Հայ էջեր»-ի մէջ այդ բողոք-տողերը չկան, և միայն բարերազող դիպուածով պահուած են Օքսֆորտի Բողոքեան գրատան Բ. 16 ՁԽ-ի մէջ:

Իրիկի «Ընդդէմ Թալաքին» տաղի մէջ մի ակնարկ ևս կայ, որով թէ տաղի գրութեան ժամանակը կարելի է որոշել մօտաւորապէս և թէ Թալաքների արշաւանքների ժամանակ ապրած մէկը լինելու մի այլ ապացոյց գտնել: Բախտի՛ Թալաքի սիսփայական ու յեղշիղակ լինելու նկատմամբ, ասում է.

Յորժամ որ ի յեա քակիս ու ձրգես
ի յաչքըդ խոյր,
Աչ թուզթ, ոչ գարանն օգնէ, չոչ հարխը
հազար ձիաւոր:

Տաս ի վերջն չի վայր ձրգես, չի մընես
զոչ ոք թաղաւոր
չընցդուն քար ափով ածես, որ չօղնէ
հազար սրմբաւոր:

Սա՛նիւղ սիւանն ասննք, որ մըրեց զերկե նա սոլոր
Հանցեղ սիսաթ ունէր, որ չունէր ոչ ոք թաղաւոր:
Իէ. 27—32:

Գտնուելով Մմբատ Օրբելեանի մասին, թէ Արղուն ասիկանը և հարկահաւարը իւր երախտադիտութեան իրրև արտայայտութիւն Սիւնեաց իշխանութեան մէջ վերահաստատելով և Աւարի իշխանութեան ևս տիրանալ տալով, Ստեփաննոս Օրբելեանն ասում է.

«... տայ գղուսար նորա (=Աւագի) գժոշաքն ի կնու-
թիւն մեծ խոջային սանիպ դիւանին, որ ունեւ ի բռին գա-
մենայն աշխարհն խեղութեանն Ապաղայ դանին... և նա էր
դիւանի գլուխ և վերակացու ամենայնին. և էր այս յ718
թուին, (=1269), Բայց. արքայն... Հուլաւու դան մեռանի
ի յ713 (=1264) թուին. ընդ նմին... և կին նորա, որք դե-
ղակուր եղեն ի բաղմահնար խոջայէն սանիպեմ...» (Օրբլ.
418—19.—Չամչ. Գ. 259—60):

Ապա պատմելով Սմբատի անգաւակ լինելու մասին, որդե-
գրում է իւր եղբոր որդի Տարսայիճին,

«... գնաց ի մեծ դիւանն արքունի առ Արղուն և
Սանիպն ի Դարէժ... անդ հիւանդացաւ... և մեռաւ (†1273)
...և տուեալ դամենայն իշխանութիւն իւր ի... Տարսայիճն
յանձնի գնաւ Արղունին և Սանիպին...»—(Օրբլ. 419—420):

Վերջին անգամ Սանիպին հանդիպում ենք Ապաղայ խանի որդու՝
Արղունի իշխանութեան ժամանակ և իւր թշնամիների թւում կո-
տորուածների մէջ յիշատակուած նաև «գժմանիպ դիւանին», 1286
թ.—(Տես վերը, էջ 38.—Օրբլ. 426).—Որով մի մտաւորապէս
որոշ տարեթիւ ենք ստանում «մարաքի» տաղի գրուելուն, այն է
ոչ կանուխ քան 1286 թ. երբ սպանուած է Սանիպ դիւանին²),
որ չնայելով, որ

... մլքեց գերկիր նա բոլոր,

և

Հանցեղ սխասաթ ունէր, որ շունէր

ոչ որ թաղաւոր,

բայց և այնպէս Ծալաքի յեղյեղուկ ու անորոշ երեսից նա ևս
սպանուած է և տուժում:

Աչքի առաջ ունենալով, որ Ծրբիլը ծանօթ է 1291 թուակա-
նին տեղի ունեցած զէպքերի հետ, փորձենք որոշել թէ ինքը՝
երգիչը երբ պէտք է ծնուած և փախճանուած լինէր:—Մի աղօտ
ակնարկ այդ մասին դանում ենք նայն «Ընդդէմ Ծալաքին» տաղի
մէջ: Ծալաքից դանադան ինդիրների լուծում խնդրելով, նորան

Ծալաքն պաղիտուն կու տայ,

«Մի հաջեր, անդէա հալնուր,

Քանի ևս Ծալաք ևմ լիւր,

չեմ տեսն քան բղբեց մոլոր.

Իէ. 46—47.

²) «Սանիպ-դիւանի» պաշտօնի յիշատակութեան մասին տես
վերը, էջ 181.

ուրեմն «Փալաք»-ը գրելու ժամանակ Թրիկն արդէն «հալկոք» էր:

Մի այդպիսի ակնարկ կայ և «Վասն Արղուն զանին և Բուղային» տաղի մէջ, ուր երգիչը զանգատոււմ է

«Աւուրքս անցաւ հեա Մասասիս

եզըր չի կայ, հուն չերեին.

Յաւս երկարեց, ի յոսկր անցաւ

Այլ չի մընաց համբերութիւն»:

Արդ այդ տաղը գրուած պիտի լինի ոչ կանուխ քան 1291 թ. և հաւանօրէն նոյն այդ թուականին, երբ իւր տարիքի մասին արած ակնարկից տեղեկանում ենք, որ նորա «աւուրքն անցած»-են, որ աւելի զօրեղ արտայայտութիւն է քան «հալկոք» եզրը: Ուրեմն «Փալաք»-ի տաղն աւելի առաջ էր գրուած քան «Արղունի և Բուղայի» տաղը: Արդ ենթադրելով, որ «Փալաքն» աւելի վաղ արտագրութիւն է, քան Արղուն խանի տաղը, որովհետեւ Արղունի տաղի մէջ նա աւելի լաւատես է, քան «Փալաքի» մէջ, որի յոստատեսութեան ակնարկները թերևս 1286 թ. առաջ եղած պատմական անցքերն են ունեցել ի նկատի, ուր և յիշատակոււմ է Սահիպ-գիւանի մահը, միւս կողմից «աւուրքս անցան» եզրը իբրև տարիք ընդունելով 75—80 տարեկան հասակի մի ակնարկ, ուրեմն պէտք է ենթադրել, որ Թրիկը ծնուած պիտի լինի 1210—20 թուականներին և հաւանօրէն վախճանուած ժԳ. դարու վերջերը և կամ ամենաուշը ժԿ դարի առաջին տասնամեակում, ենթադրելով, որ «հալկոք» և «աւուրքն անցած» Թրիկը կարող էր «սիրող վաներուն» լինելուց յետոյ աւելի բարերաստիկ օրեր ունեցած և 10—20 տարի ևս ապրած լինէր:

Եզրակացութիւնս անշուշտ լոկ ենթադրական է, սակայն ոչ անհաւանական:

Այսպիսով Կ. Պօլսի «Երկարգնդի» կարծիքը՝ Թրիկը ժԷ. դարում ապրած համարելը ոչ մի հիմք չէ կարող ունենալ, մանաւանդ, որ ինչպէս գիտենք ՋԿԲ=1513 թ. արդէն տպագրուած Տաղարանի մէջ նորա տաղերից մէկն է մտնում:

Նոյնպէս անհաւանական է հ. Ալիշանի կարծիքը, որ «ԺԵ. դարէս ետք ալ չէ» ասելով է շատանում, մի ամբողջ դարի տարբերութեամբ մեր ենթադրութիւնից:—Աւելի մօտենում է Հ. Պատուրեանի կարծիքը, որ վախճանուած է դնում 1330 թ. միայն, այն անապացոյց ենթադրութեամբ, թէ «Թրիկ» անունը Սաշատուր Կեչառեցու կեղծ անունն էր, որ ոչ մի հիմք չունի, քանի որ տեսանք արդէն, թէ Թրիկը ոչ վարդապետ էր և ոչ իսկ առհասարակ գրագէտ անձն:

Երգչիս «Ֆրիկ» անուան նկատմամբ եղած կարծիքները հանգում են այն ենթադրութեան, որ դա կեղծ անուն պիտի լինի, ինչպէս տեսանք վերն առաջ բերած կոչումների մէջ (Հ. Պատուրեան, Ա. Զօպանեան, «Սիօն»),—և որի իսկական անունը դեռ խնդրելի է:

Մենք ևս այդ կարծիքի ենք, այնէ, որ Ֆրիկը երգչիս իսկական անունը չէ, այլ նորա գրական անուն, կեղծանունն է: Բնական հարց է առաջ գալիս, ինչ էր ուրեմն նորա իսկական անունը: Պէտք է նկատել, որ Ֆրիկ անունը մեր գրական աշխարհում շատ օտար է, նոյն իսկ հազուադէպ մի եղակի անուն, որպիսին չենք հանդիպում նաև մեր ժողովրդական անունների շարքում, ոչ էլ անունների սովորական կրճատումների մէջ:

Ենթադրել, որ այդ անունը առաջ է եկել Եփրեմ, Եփրեկ անուններից՝ դժուարանում ենք, որոնց հետ թէև հեռուօր մի արձագանդ ու ազդակցութիւն ունենալու հնչիւն ունի:—Մեր պատմական անցեալն ևս այդպիսի մի անուան ժառանգութիւն թողած չէ, եթէ ի նկատի շառնենք Կիլիկեան շրջանի օրերը, երբ օտար ազդեցութեամբ թերևս այդպիսի անուններ գործածութեան մէջ մտած լինէին, այն ևս խիստ սակաւաթիւ, որ թերևս Ֆրեդերիկ անուան աղջատումը կամ նուազականը ենթադրուէր:

Մտաւոր մի անուան հանդիպում ենք ԺԱ. դարի սկզբներին Անիի ս. Փրկիչ եկեղեցու (աւարտած 1033—34 թուականներին) ներսն եղած բազմաթիւ պատկերների շարքում, Մատթէոս Աւետարանչի պատկերի ներքև նկարուած է մէկը՝ ծնկաչօք աղօթելիս կամ Աւետարանչի բարեխօսութիւնը հայցելիս և այդ ծունկ եկածի տակ կարդացում է «Սարգիս Ծարեիկ կամ Փարչիկ»^{*)} Այդ անունը հեռուօր մի աննշութիւն չունի արդեօք Ֆրիկի հետ, իւր այդ ձևի մէջ իսկ հայ անուանակոչութեան հազուադէպ օրինակներից մէկը լինելով, հաւանօրէն օտարամուտ, թէև հայացած իւր իկ մասնիկով, թէ «Փարեիկ» բառը պէտք է հասկանալ իբրև արհեստի ցուցում, այսինքն «փարե» անոց, նկարագարող, նկարիչ կլն. (ինչպէս կարծում է մեր բարեկամ պրօֆ. Ն. Աղսնց).— Ինչպէս Անիի նոյնշրջանի մի արձանագրութեան մէջ հանդիպում ենք մի այլ «Սարգիս լարարարէի»^{**)}

Փարեիկ անուան մտաւոր մի անուան հանդիպում ենք «Դիւան Լայոց Պատմութեան» հատ. Ժ. գրքի «Մանր Պատմագիր»

*) Братская помощь, Проф. Н. Матиюжюладր, էջ 207.— Արիստ. աքրեպս. Սեդրակեան «Լայոստանեայց եկեղեցու պատկերալարգութիւն», Ս. Պետրք. 1904. էջ 93.

***) Ալիշան, Երգակ, էջ 53.

Յերսի մէջ^{*)} ուր կարգում ենք. «Կուրավցին (=Մշոյ Մ. Կարապետի միաբան Մարտիրոս կախկապոս) ալ ցորէն բերելու համար գնացած էր Մուշ, վերադարձաւ վաճառելու Եւ Էմին փաշան ալ Քէշիչ օղլիի տղաներով Բաղէշն էր. Կուրավցին Ֆրաբիկ Դաւիթն յուզարկեց Բաղէշ՝ Քէշիչ օղլենց մօտ (ՌՄՀԲ—1830-ին), անոնցմէ տեղեկանալ, թէ ինչ կայ ինչ չկայ...»։—Արդեօք յառուկ անունէ Ֆրաբիկ, որ խիստ հաղուադէպ կրճատութեանց է, թէ որ և է արուեստի կամ պարագմունքի ցուցումն է, դժուարանում ենք ասել, սակայն հակամէտ ենք որոշ նմանութիւն հանելու. Ֆրաբիկ և վրաբիկ բառերի մէջ, որով Դաւիթ անունն մի մակդիր է դասնում Ֆրաբիկը, իբրև նորա հայրենիքը մատնանշող մի բառ:

Ֆրիկ անունն մօտաւոր ալ մի անունն հանդիպում ենք Դօշ Մխիթարի վաճառի արձանագրութիւնների շարքում, 1231 թ. գրուած, որով վաճառի միաբանութիւնը խոստանում է ապա... «դ՛ե խորանս Մարտիրոսի, Գրիգորի, Փիրաժի^{**)}, Քամարին, Նաղխաթունին և Մատթէոսի անխափան...» պատարագ^{***)}։

Նայն անունն, առանց որևէ փոփոխութեան, հանդիպում ենք Քաւրիդի առաջնորդարանի ձեռագրներից մէկի մէջ, որ մի «ժողովածու» է^{†)} զանազան նիւթերի և գրուած հայոց ՊՍ=1291 թուականին, (էջ 1^ր) պատահում ենք հետևեալ փոքրիկ յիշատակարանին — Ով որ ձրիկս յիշէ նայ ձեռամբ յօճանէս մեղապարտի որ շղի աթաշակի սվ որ զոդորմիսն պարզեէ նայ հաղորայցատիւնն «տոնուց ի ք՛սէ և նմայ փառք յախտեան պախտենից ամէն»։— Յիշատակարանս, որ ըստ ինքեան ոչ մի նոր տեղեկութիւն չէ

*) Կիւան. հատ. ժ. էջ 531.

**) Հետաքրքրական է արձանագրութեանս վերապատկոթիւնը. արդեօք Փիրաժ է, թէ Փիրակ այդ անունը, որ աւելի մօտ կլինէր մեր հեղինակի անունն:

***) «Յուսոփս աստուծոյ. ք՛. կղբարքս Մարտիրոս և Գրիգոր և ամուսին Քամար միաբանեալ Եփրեմա շինեցաք զեկեղեցիս, վասն որոյ անկեցաք դայդիսն. տէր Յովհաննէս և միաբանքս և տուն նոցա պատարագ զեկեղեցիս ք՛. տաւնն սրբոյն Գրիգորի դ՛ե խորանս Մարտիրոսի, Գրիգորի, Փիրաժի, Քամարին, Նաղխաթունին և Մատթէոսի. անխափան. կատարիչքն արճնին յատուծոյ. ս՛ձ»։ [=1231].— Բարխուդարեան Մակար կախկապոս. «Արցախ», Բաղու, 1895, էջ 352.— Կ. Կասաբեկան «Վիմակրան Տարեգիր» Պար. 1913. էջ 75.

†) Հ Աճառեան, «Յուզակ Հայեւեկի Ղեկավարաց Քաւրիդի», 1910, Վիեննա, էջ 46, «Յուզակ Ղեկավարաց Առաջնորդարանին Քաւրիդի», № 3 ձեռագրի:

աւելացնում մեզ հետաքրքրող բանաստեղծի անձի և ժամանակի նկատմամբ, իւր առանձին նշանակութիւնն է ստանում մեզ համար լոկ այն տեսաակէկից, որ մինչև այժմ ոչ մի տեղ չհանադիպած այդ անունը կրեում է յիշատակարանիս մէջ, ոչ ազուադած, այլ իւր իսկ բուն ձևով:

Մեզ համար այդ յիշատակարանը մի նոր և առանձին գնահատութիւն է ստանում, «Ժողովածուի» մէջ դանուած էջ 68^Վ մի այլ Յիշատակարանով, որ Աւետարանի Մեկնութեան հեղինակինն է:

«(Ա)րդ ես վերջին սպասօրաց բանին. և արուպս բանասիրաց մթ՝ քնյ որ միայն անուամբ և ոչ արդեամբ տխեղծ մտօք և և տարտամ լեզուաւ ձեռնարկեցի յայս գ՜ծ տեսու՜ե. ոչ աւելի հոգացեալ, այլ ճշտուե՜ն հետեւե՜ալ..... Արդ եղև գրաւ համառօտ բանիցս քարոզու՜ե ի թուիս հայոց. ՊՍ. [=1391] առ ոսս արդիւնարան մեծ հոտորին Կրիգորի մեծ. յերկիս կրկնաւոր, ի վանիս Ապրակունեաց, Որ և այս ի նորին նշուլից շնորհացն ատեալ դժագրեցի. առ ի յիշատակ առ յապայ եղելոց մանկանց և եկեղեցեացդ հայտա՛ց. Այլ որք գաղափարէք գրեսջիք զսակաւ յիշատակիկս մեր ի վջք գրոյս, զի և զուք յիշեալ լիջիք ի տէ... ևն» (ԳՅ. 68^Վ):

Նայն «Ժողովածուի» էջ 118^Բ, Սաղմոսի Մեկնութեան Յիշատակարանի մէջ կարդում ենք, ի միջի այլոց, — «Ուստի և այս ատուչու՜ի սաղմոսի... ի գանձարան ճոխուե՜ց մանգանց... արեկցի... և դպակասն... ներեսցի... և սրբեսցի խիղճ վտանգաւոր հոգոյս. ընդ որս և երիցս երջանիկ վարժապետին իմոյ. Յոհաննու Որոտնեցոյ յիշ[ա]տակն ա՜հնու՜ր եղիցի, որ նախ երից ատմաց փոխու՛ առ... ք՜ս և զմեզ որք թողեալ. կամք տարատուեսեալ ի մէջ յողնաթիւ շարեաց... կմ ժամանակիս դառնուե՜ց սյորում ասպատակեալ հննք զօրաց կրկին խորագմ անուանե՜լ ատղանց. կործանեցին զերկիրս հայասա՛նց. զվրաց. զպարսից և ոգայլ բազմաց... յորում ամի էր թիւն հայոյ, ՊԼԶ [=1387]. և ամեր մաղապուրծ գոլիվ. աստ. անդ. ել շրջեաք և վ՛ր երկրի..... և և դդ՛րեալ սուղ ինչ աւուրք՝ յապահովեցաք ի վանս հրեշտաբնակ առաքելական արտոյս Եւտարեի. ուր և աւարտեալ գրեցաք ի ս՜մ ձեռամբ մթէ՛ս գրչի և աշակերտի: Այլ և աղաչեմ... որ ընդօրինակէք ի սմանէ գրեսջիք և զսակաւ յիշատակս արայս...» ևն. (ԳՅ. 118^Բ):

Վերջ ենթագրութիւն էինք արած, որ դատելով ձրիկի բանաստեղծութիւնների մէջ առատապէս ցրուած բառական ու սեւարանական տատղծի ճոխութիւնից, անհաւանական չէինք սեպել, որ նա լինէր արևելեան Հայաստանցի, այսինքն այն շրջանից, որ

այժմ յայտնի է Ղարաբաղ անուամբ:— Թարիզի Առաջնորդարանի № 3 ձեռագրի մէջ պատահած Ծրիկ անունը, նոյնութեամբ, ինչպէս յայտնի է մեզ մեր հեղինակը, և այդ ձեռագրի մէջ եղած միւս յիշատակարանները, որից երևում է, որ ձեռագիրը գրուած է «Նւստաթէի» կամ Տաթևի վանքում, 1387 թ. և երնջակի Ապրակունեաց՝ վանքում, 1391 թ. մեզ դարձեալ հիմք են տալիս ենթադրելու, որ յատկապէս Արևելեան Հայաստանի, թերևս նոյն իսկ այժմեան Ղարաբաղի շրջանի ու նորան սահմանակից մի դաւառի գաւակն էր մեր երգիչը և Ղարաբաղցի:— Ուշագրաւ մի հանդամանք է և այն, որ մեր ենթադրած ժամանակից, — թէ երբ էր տպուած մեր բանաստեղծը, — շատ էլ յետոյ չէ հանդիպում այդ անունը, և որ թէև հաղուադէպ մի անուն, բայց և այնպէս մօտաւոր ժամանակի անձերից մէկը կրում էր այդ անունը:

Անշուշտ, այս ամենը վարկածներ են, որոնց լուծումն ասպազային է վերապահած:

* * *

Պէտք է ի նկատի ունենալ, որ Ծրիկն առհասարակ իւր բոլոր տաղերի մէջ իւր անուան յիշատակութիւնն է թողնում, որով և շատ է դիւրացրել իւր տաղերի որոշման գործը: Այդ յիշատակութիւնները սովորաբար մի անգամ է լինում ամեն մի տաղի մէջ, ընդհանրապէս տաղի վերջը, սակայն պատահում է նաև, որ նոյն տաղի մէջ երբեմն երկու, երբեմն երեք անգամ ևս յիշատակում է իւր անունը, մէջը և վերջը: Այդպիսի մի օրինակ է ներկայացնում և մեր առաջ բերած «Վասն Արղուն զանին և Բուդային» տաղն ևս, ուր Ծրիկն իրեն յիշատակում է երկու անգամ, միայն տարբեր անունների տակ, մի անգամ սովորական Ծրիկ անունով, և միւսը՝ արտասովոր Մասնա անունով:

Զայս մեղաւոր ծառայքս յետին:

Մի տար տանել մեղաց զեաին:

Ծրր/իկն երեսքն ի վայր դրբել:

Եւ արտասուօք թանայր զզեաին:

Եւ ասպա քիչ յետոյ

Աւուրքս անցաւ հիտ ԱՍՍԱՍԻՍ,

Եզըր չի կայ, հուն չերեին:

Յաւս երկարեց, ի չոսկր անցաւ:

Այլ չի մընաց համբերութիւն:

Գարդ է, որ երբեմն երկու անգամ ինքն իրեն յիշատակելու սովորութիւն ունեցող Ծրիկն, այստեղ ևս նոյն սովորութեանն է հե-

տեղ, բայց այս անգամ բարեբաղդ մի զուգադիպութեամբ տալիս է մեզ իւր դադանիքի բանալին:

— Պարզենք:

Կ. Կոստանեանի խմբագրութեամբ հրատարակուած «Նոր ժողովածու, Միջնադարեան Հայոց տաղերի եւ ոտանավորների», Գ. պրակ, էջ 40—43 գետեղուած է մի տաղ, «Վասն ողորմութեան վերնագրով եւ որ սկսուած է «Յիշէ զքան Աւետրանին խնաստուն կուսանքն ի նրման» բառերով: Նոյնը հրատարակել է եւ Ա. Չոպանեան իւր «Հայ եզերի» մէջ, էջ 35—37, նոյն խորագրով: Հրատարակիչներից ոչ մէկը չէ տալիս այն հիմունքը, թէ ինչո՞ւ այդ տաղը Թրիկին է պատկանում, կամ ինչո՞ւ հրատարակիչները տաղս Թրիկին են վերագրում, քանի որ ոչ վերնագրի եւ ոչ էլ տաղի մէջ ոչ մի յիշատակութիւն չկայ, թէ այդ տաղը Թրիկին է պատկանում. այդպիսի հիմք չկայ նաև այն ձեռագրերի մէջ, որոնցից հանած են այդ տաղերը:—Բացի դորանից նոցա աչքից վրիճում է եւ այն հանգամանքը, որ տաղիս տնագլուխ տառերը (Acrostique) կազմում են ՅՈՒԱՍՄԲ ՄԱԶԱԶ անունը, որի մէջ երգիչն արդէն իւր ձով լինելն է յայտնում:

Ով է այդ Յովասափ Մազազը. Ըստ Ն. Բիւզանդացու^{*)} այդ Յովասափ Մազազը նոյն անձը պէտք է լինի, ինչ որ Յովասափ Սերաստացին. հետևաբար այդ տաղը չէ պատկանում Թրիկին, այլ Սերաստացուն՝ ուստի եւ սխալմամբ մտած է նորա տաղերի ժողովածուների մէջ եւ սխալ հետևողութեամբ եւ Թրիկին վերագրած: Ըստ մեզ, այդ «Մազազ»-ը նոյն անձն է ինչ որ «Մասաս»-ը, եւ որովհետև Մասասը եւ Թրիկը նոյնը համարելու վարկածն ունեցանք, ուրեմն Թրիկն, ըստ մեր կարծեաց, է Յովասափ Մազազը, ուր Մասասը ամենայն հեշտութեամբ կարող էր ձևակերպուել «Մազազ»-ի երգչի դիւրութեան համար: Արդէն այն պարագան, որ այդ անունուն «Յիշէ զքան Աւետրանին» տաղը մտել է Թրիկի տաղերի շարքը, առանց Թրիկի սովորական անունան յիշատակութեան, մի առհաւատչեայ է, եթէ ոչ կատարեալ նոր ապացոյց, որ արտագրողների համար ամէն կասկածից դուրս էր, որ այդ տաղը Թրիկինն է. նոցա համար պարզ էր այն, ինչ որ մեզ համար այսօր կասկածելի է եւ խնջրական՝ այն քէ Յովասափ Մասաս եւ Թրիկ հոյն անձերն են:

Բացի այդ՝ «Յիշէ զքան Աւետրանին» տաղի եւ Թրիկի տաղերի քննադատութեան ու բնուն, դարձուածները, մտքերն ու խոհերը, աշխարհայեցողութիւնը իրար այնքան նման են, որ մեր

^{*)} Անձնական կարծիք արտայայտած մեր զբաղման խնդիրների շուրջը դարձած խօսակցութեան ժամանակ 1911 թ. Վենետիկ:

վարկածն աւելի ևս հաւանութիւն է գտնուած, այդ երկու անուաներն իբրար նոյնացնելու և նոյն անձը լինելու ենթադրութիւնն անելու: Յովասափ Մաղազի տաղի մէջ պատահող հետեւեալ տողերը: —

Անուշ կերու խում արա, յաշխարհիս
 չի կայ բեզ նրման,
 Գրնա, դու բըտէ զմարմինդ, որ որդունքն
 ի հոն զօրանան

նոյն միտքն ու դարձուածն է, ինչ որ Թրիկի «է», անօրէն և անառակ տաղի հետեւեալ տողերը.

Ստամոքսդ արձակ ես դու զուգել,
 զինչ ըզձիու կամ ըզջորոյ,
 Մարմինդ գեր է և քընքուշ,
 հեշտ և անուշ զինքդ պահելոյ...

Սիրան ու սակասն և փորոտին
 բարձր է պատել գեր ճրագու,
 Բըզած հաւով է անուցած,
 անուշ զինի տայր խըմելու...

Տեսնուլ ըզհուրըն բորբոքեալ,
 մեծաց որդունքն են ի հաշու,
 Կասեն, թէ «Երբ զայ մեր ծընողն,
 որ մեր ուտենք անուշ խաշու...» քննու
 (ժ. 37, 39, 44—75, 71—72):

Թողնելով այլ նմանութիւնների և մտքերի յարադրութիւնների կոչումներ երկու տաղից, անցնենք հետեւեալ խնդրին:

Ինչ է այդ Մասա անուշը, որ Թրիկը գործ է դնում իւր անձի նկատմամբ:—Արդեօք դա մի ծածկանուն է, կապուած լոկ հեղինակի անուան ու անձի հետ, թէ մի ընդհանուր, աւելի լայն մտքով տուած արտայայտութիւն է: Թրիկի «Արդունի տաղի» մէջ պատահած Մասա բառի հետ մի քանի անգամ պատահող այլ ձևակերպութիւնը, — Մասասչիք արտայայտութիւնն է, որ մեզ այնպիսի ենթադրութիւն է անել տալիս, թէ այստեղ որոշ գաղափարների հակադրութեան, միևնոյն եղրի դրական և բացասական կողմերն արտայայտող բառեր են դոքա: Արդեօք Մասա մի պատմական անուն չէր «հայ» գաղափարն արտայայտող և դորա հակադրութիւնը «Մասասչիք», այսինքն «ոչ հայ, օտար» գաղափարի արտայայտութեան մի նշան, պայմանական մի արտայայտութիւն,

գրական կէտեր:

Ինչ էլ որ լինի, յամենայն դէպս, յանձին Թրիկի, ունենալ
ազգային գիտակցութիւն և ոգի զարթեցնող մի քնքոյշ երգիչ,
համազուած բարոյգիչ, որ մի բնական հակընթաց շարժում էր իւր
չուրջը կատարուածի, իւր շրջանի, այն շրջանի, երբ ամեն ինչ,
որ հայութեան նեւ էր կապուած, այդ ամենը ջնջելու, ոտնատակ
տալու, աւերելու մի բուն ձգտում կար, երբ Թաթարը իւր յե-
լուզակի բնաւորութեան զոհ էր բերում քաղաքակրթութեան
պատուհները վայելող մի ազգի բոլոր բարոյական ստացուածքը, որ
Թրիկի համար ամեն սիրուց բարձր է:

Այս սէրըս, որ ի յիմ սիրտս է

ընակել, զայն նա գիտենայ,

Ով ինքըն հանց սէր ունի, որ նրմա ընկեր

չունենայ,

Այս սէրս աշխարհի սիրուն չէ նրման,

ով զինքն իմանայ,

Այս սէրս ի լուսոյ եկել, ով սիրէ՝ նա անմահանայ,

Երնէկ ևս նորա կուտամ, որ զսէրս ի սիրտ ունենայ...

ԻԸ. 28—32.

Մի այլ տեղ վարպետ համեմատութեամբ լայն սիրով տարուած-
ների համար երգում է,

Նքմանեցար արծուին ու ի յօգն ելար

չըփացար,

Ասցեր՝ թէ՛ շատ մի գեկան գուգեմ՝

լինիմ կամս ի կատար,

Նեաով մի հանց խոցեցար, որ զինչ

ըզկրակ վառեցար,

Երբ գաչքդ ի նեարն արւիր,

ի քո թևդ ըզինքըն տեսար,

Դու քո լեզուովդ ասացեր,

Թիմ թևէս չեղև ինձ հընար.

ԼԹ. 70—74.

Բայց և այնպէս այդ ևս նորան չի յուսահատեցնում, և նա
փստահեցնում է մեզ, թէ

Զինչ գգեա գաշխարհս բոլոր պիտի դամ:

Ու մըանում ևս՝ Թըրիկս ի ծով ու ծրփամ

ի յալեաց կոծելոյն ևս ի՛նչ վախենամ...

Երբ քըննէ մէկըն գիտ, թէ ուր կու գընամ,
 Ես նորան պատենի պատասխանի տամ.
 Եթէ խնդրեմ գայն գոհարն, որ փարթամանամ,
 Քիւ տեսնում իմ մըտաց աչօքս ու գողամ,
 Ընդ բերի, զինքն առ իս, որ պահ մի խընդամ,
 Եկու քաղի շունչս յինն, թէ երբ մօտենամ.
 Եկու աւնում պահ մի յափս՞իս ու բախանամ
 «Եւ հոգով և մարմնով ևս անմահանամ»

ԼԸ. 64—71.

Նայն այդ զազափարր, որ նորան հանգիստ չէ տալիս, մի
 այլ տեղ նա այսպիսի մաքուր զգացումների արտայայտութեան
 է վերածում՝ բանաստեղծի գեղեցիկ համեմատութիւններով հստա-
 ցած ու համեմատ.

Շատ մի հայերէն քսմեր խորհրդով
 զըրախտ արնկեցի,
 Յաշիցս ազրերացն ջուր քաշեցի,
 զինչ որ սընուցի.
 Ձիմ լերդս զինչ ըզհաց կերայ, սյ կզբարք,
 ինչուր բուսուցի,
 Երկու լոյսն ի մի դարձաւ գիշերին՝
 ինչուր հասուցի.

Handwritten notes:
 Այսպիսի
 պարզ և համեմատ
 լինելով
 միայն
 ինչ որ սընուցի
 ինչուր բուսուցի
 ինչուր հասուցի

✓ Անկայ ի հոգաց ծովըն, երբ որ գայս
 բաներս յիշեցի,
 Ձիմ աշու երբս շափ արի ու զծովու
 ջուրըն շափեցի,
 Ձիմ միտքըս լսղնորդ արի, ի ծովու
 յատակն իջուցի,
 Վասն այն մարդարաին համար, որ ծովու
 յատակըն լինի:
 ԻԴ. 49—56.

Այս գեղեցիկ տողերի մէջ ցտլանում է մերիկի ամբողջ հոգին,
 նորա աւիւնի բոլոր թափը, զգացումների ամբողջ ջերմութիւնն
 ու յատակութիւնը, երգչի ըզմերն ու յոյսերը, որի միւս բոլոր
 տաղերն իսկ, եթէ զժբազգ զուգադիպութեամբ անհետ կորչէին, և
 միմիայն այս վերջին տողերը մեզ ժառանգութիւն մնային նո-
 քանցից, այդ քանի տողերի համար իսկ գլուխ պէտք է իջեցնել
 նորա մաքուր տաղանդի և ջինջ մտքերի առաջ, և ոչ մտապո-
 թեան մատնել, հոգով ամբողջ մեր տաղանդաւոր երգչին:

Տիրայր եպս.